

զուսանական երգեր ու զրոյցներ, զորս հին Հարսանեաց նկարագրութեանս մէջ աւելի մանր յիշած եմ (Թէոդ. 200-7), եւ որոց ակնարկեցինք մեր սովորական կոչնոց մէջ ալ (աստ, 206, '9):

Ուշագրաւ են մանաւանդ սոյն հանդիպին սեպհական ուտելիները, որոց կը հանդիպինք Գեւորգ Եզնկացւոյն քով: Եւ են « նուռն, խնձորն անուշահոտ՝ ապիտակ եւ կարմիր » . գոյներ՝ որ կը յիշեցնեն պսակի նարօտին երանգն ու խորհուրդը (Թէոդ. 204): Եւ վերջապէս « ձռ կարմիր », որ մեր քով ահա այս առթիւ ալ կ'ուտուի (Գեւ.), բայց նորամուտ կամ տեղական սովորութեամբ. զի Տաթեւացին « միայն » զատկին զիտէ զայս (աստ, 380): Եթէ կարելի լինէր հոս ալ ենթադրել զատկական հաւկթին խորհուրդը (անդ), դեռ բազմալի պիտի մնար նուան ու խնձորին իսկական նշանակութիւնը:

2. — Ծնունդ եւ Մկրտոնքիւն: — Ընտանեաց նորածին անդամոց երեւումն ալ կը պահանջէր զուարթ խնձոյք մը, զոր կը յիշատակէ Յաճախապատումն իսկ, ցուցնելով սովորութեանս մեծ հնութիւնը: « Բազում ուրախութիւն ցուցանեն, կ'ըսէ, ի ձննդեան, եւ բարեկամօք եւ մերձաւորօք տօն կատարի ձննդեան եւ սնուանակո-